Ընդունվել է ԲՇԽ-ի կողմից 2023 թվականի հունիսի 29-ին

ԲՇԽ-ի հայտարարությունը «Շահագրգիռ կողմերի ներգրավվածություն» վավերացման հարցաթերթի «ԲՇԽ-ի վերահսկողություն» ենթաբաժնի (մաս I) վերաբերյալ

Ի լրումն վավերացման «Շահագրգիռ կողմերի ներգրավվածություն» հարցաթերթի «ԲՇԽ-ի վերահսկողություն» (մաս I) ենթաբաժնում ներկայացված տեղեկությունների և ինքնագնահատականի և հաշվի առնելով ԲՇԽ-ի քաղաքացիական խմբակցության մտահոգությունը՝ կապված ԲՇԽ-ի առկա նիստերի անցկացման ցածր հաճախականության և դրանով պայմանավորված նիստերում հանքարդյունաբերության ոլորտի կառավարման հարցերի ավելի լայն շրջանակ ներառելու հնարավորությունների սահմանափակման հետ՝

ԲՇԽ-ն արձանագրել է, որ ԲՇԽ-ի վերահսկողությունը հաշվետու ժամանակահատվածում մեծ մասամբ իրականացվել է էլեկտրոնային թղթակցությունների, օրակարգային հարցերի հեռակա էլեկտրոնային քննարկումների և համաձայնեցումների տեսքով: Ընդունելով հանդերձ, որ ԲՇԽ-ի վերահսկողական աշխատանքների կազմակերպման այդ ձևը ապահովել է ԱՃԹՆ-ի Ստանդարտի բոլոր պահանջների կատարումը, ԲՇԽ-ն ընդունում է, որ առկա նիստերի քանակը անբավարար է եղել, որի հետևանքով քննարկումների շրջանակից դուրս են մնացել իրավական և պրակտիկ բնույթի այլ հարցեր, որոնց վերաբերյալ ԲՇԽ-ի կարծիքը և առաջարկությունները կարող էին կարևոր նշանակություն ունենալ հանքարդյունաբերության ոլորտի լավ կառավարման համար:

Ուստի, ԲՇԽ-ն որոշում է՝

Առաջիկա տարվա ընթացքում պարտադիր անցկացնել ԲՇԽ-ի 3 առկա նիստ, որոնց օրակարգերում առաջնահերթ կարգով ներառել ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության կողմից առաջարկված հարցերը: Բացի դրանից, հետագա տարիներին ԲՇԽ-ի նիստերն անցկացնել՝ խստորեն պահպանելով ԲՇԽ-ի աշխատակարգով սահմանված հաճախականությունը: